Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 149 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	44-օրյա պատերազմում նահատակված Գոռ Մանուկյանի միայնակ մնացած քրոջ՝ հոգեկան առողջական խնդիրներ ունեցող Անուշ Մանուկյանի տան համար այլընտրանքային էներգիայի աղբյուրի ստեղծում: Սոցիալական պայմանների բարելավում՝ արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման միջոցով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի «Հայ օգնության և զարգացման ընկերակցություն» (ARDA) շահույթ չհետապնդող կազմակերպություն (ԱՄՆ, Փասադենա)
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արագածոտնի մարզ, քաղ. Ապարան, Գայի փողոց, տուն 31, սոցիալական բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	767,800 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Անուշ Մանուկյան, Արագածոտնի մարզ, քաղ. Ապարան, Գայի փողոց, տուն 31
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի մարտի 20-ից մինչև մայիսի 20-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	3.28 կՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի տեղադրում՝ 767,800 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի մարտի 20-ից մինչև մայիսի 20-ը:
10.	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	3.28 կՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 767,800 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

04.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ